ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ գ. Անտառամեջ
Հեռ. / +374/94 01-83-83
E-mail antaramedj.dpr@gmail.com
07 **հունվարի** 2022**թ.**

Ե- 324

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում «Մաթեմատիկա» առարկայի՝ տասը, «Ֆիզիկա» առարկայի՝ վեց, «Ռուսաց լեզու» առարկայի՝ տասներեք դասաժամի ուսուցիչների թափուր տեղերի համար հայտարարվել է մրցույթ:

Ուսուցչի թափուր տեղերը համալրելու համար մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 26-ին «Մաթեմատիկա» առարկայի համար ժամը 12:00-ին, «Ֆիզիկա» առարկայի համար ժամը 14:00-ին, «Ռուսաց լեզու» առարկայի համար ժամը 16:00-ին Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը :

Առդիր մեկ էջ:

Տնօրեն Digitally signed by AZARYAN ARTUR 2909810402 Date: 2022.01.07 15:58:43 AMT Ա. Ազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մաթեմատիկայի (10 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ), ռուսաց լեզու (13 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. մեկ լուսանկար 3x4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում :

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2022 թվականի **հունվարի 20-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենան **հունվարի 26-ին՝** «Մաթեմատիկա» առարկայի համար ժամը 12:00-ին, «Ֆիզիկա» առարկայի համար ժամը 14:00-ին, «Ռուսաց լեզու» առարկայի համար ժամը 16:00-ին Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում.
հասցեն՝ Գեղարքունիքի մարզ գյուղ Անտառամեջ 2-րդ փողոց շենք 11:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-01-83-83 հեռախոսահամարով: